**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***Շիրակի մարզի Արթիկի բազալտների հանքավայրից արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լրամշակված հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. մայիսի 13-ին ժամը 14:30-ին՝ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Արտբազ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արթիկի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Արտբազ Մայնինգ» ՍՊԸ-ի (նախաձեռնող), Արթիկ համայնքից՝ համայնքապետարանի աշխատակիցները, Անուշավանի բնակավայրի վարչական ղեկավարը, բնակիչները, ինչպես նաև շահառու համայնքների ներկայացուցիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց հանդիպման մասնակիցներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքքնվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է «Արտբազ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից: Այնուհետև ներկայացրեց արդյունահանման աշխատանքների կատարման ընթացքում հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների, վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն, որոնց կանխարգելման ու մեղմման համար պետք է իրականացվեն հետևյալ մշտադիտարկումներ և միջոցառումներ՝

- իրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը իրականացնել բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց «Արտբազ Մայնինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մանվել Հարությունյանին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը:

**Մ.Հարությունյանը** մանրամասն ներկայացրեց Անուշավան բնակավայրի վարչական տարածքում արդյունահանման աշխատանքների վերաբերյալ գնահատման հաշվետվությունը, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց կապված հայցվող տարածքի արդի վիճակի վերաբերյալ:

**Մ.Հարությունյանը** պատասխանեց որ տարածքի մի մասը վաղ ժամանակներից խախտված է:

**Համայնքի ղեկավարը** հարց բարձրացրեց հարևանությամբ գտնվող դաշտերում ցորենի արտերի աղտոտման վերաբերյալ և դաշտեր տանող ճանապարհի վերաբերյալ:

**Մ.Հարությունյանը** պատասխանեց որ իրականացվելու են ջրցան աշխատանքներ հնարավորինս նվազեցնելու ազդեցությունը ցանքսերի վրա, իսկ ճանապարհը մատնանշված ճանապարհը հայցվող տարածքի հետ կապ չունի և ոչ մի ազդեցության չի են թարկվելու նախաձեռնողի կողմից:

**Հ. Ֆրունզիկյանը** հավելեց որ չոր և շոգ ամիսներին անհրաժեշտության դեպքում իրականացնել ջրցան օրեկան 2-ից 3 անգամ:

**Բնակիչները** հետաքրքրվեցին արդյոք աարտադրամաս լինելու է թե ոչ տարածքում:

**Նախաձեռնողը** պատասխանեց որ ոչ բազալտները համապատասխան մեքենայով պոկվելու են և տեղափոխվելու են Արթիկ քաղաք այնտեղ էլ կմշակվեն և կիրացվեն:

**Բնակիչները** հետաքրքրվեցին սոցիալական ծրագրերի մասին, և առաջարկեցին համայքի բնակիչների ներգրավվածությունը աշխատանքներում:

Նախաձեռնող **Գրիգոր Վարդանյանը** ասեց որ այո սոցիալական ծրագրեր լինելու են, որը կքննարկենք համայնքի հետ և ըստ առաջնահերթության կիրականացնենք, և հավելեց որ հիմնականում աշխատանքներում ներգրավված են լինելու Անուշավան բնակավայրի բնակիչները իրենց համապատասխան տեխնիկայով:

**Հ. Ֆրունզիկյանը** հավելեց որ գնահատման հաշվետվության մեջ կան որոշակի շտկումներ իրականացնելու անհրաժեշտություն և հարց աբարձրացրեց մեքենաների անվադողերի լվացման հարթակի վերաբերյալ, քանի որ ճանապարհները որոնցով պետք է տեղափոխվի Արթիկ քաղաք, հիմնականում քաղաքային են և պետք է նախատեսել անվադողերի լվացման հարթակի տեղադրում:

**Մ.Հարությունյանը** պատասխանեց և համաձայնեց, որ այո կներառենք գնահատման հաշվետվության մեջ հարթակի կառուցումը և թվարկված շտկումները կիրականացվեն և կներկայացվեն:

Այլ հարցեր չհնչեցին և **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«Արտբազ Մայնինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ/տնօրեն՝ Գ. Վարդանյան